746 Եթե հույս չունես, եթե ուժ չունես,

1. Եթե հույս չունես, եթե ուժ չունես,
Շուրջդ ամեն բան սառն է ու դատարկ,
Եթե հոգնել ես, հիասթափվել ես,
Հենց այդ պահին դիմի՛ր Քրիստոսին:
Դու մեկնի՛ր ձեռքդ Հիսուսին (Քրիստոսին)(2),
Նա քեզ կօգնի, քեզ չի լքի,
Նա միշտ քեզ հետ է, հավատա՛,
Նա քեզանից չի հեռանա՛:
Դու հավատա՛:

2. Այժմ դու քայլի՛ր վստահ քայլերով՝
Հավատալով ողորմած Փրկչիդ,
Նա քեզ կընդունի, կմխիթարի,
Հոգուդ մեծ փրկություն կշնորհի:
Դու միայն Նրան ընդունի՛ր,
Տեր ու Փրկիչ դու դավանի՛ր,
Կյանքդ Նրան դու վստահի՛ր,
Հավերժ Նրան փառաբանի՛ր:
Նա արժանի է փառքերի,
Երկրպագության, օրհնության,
Նա է Մեսիան, Նա է Արքան,
Նա է Փրկիչը մարդկության,
Փառք տանք Նրան
Հավիտյան: